

Սվետլանա Ռ. Թումանյան
Բանաս. գիտ. թեկնածու

ՇԱՀ-ԱԲԱՍԸ ԵՎ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅԵՐԸ

Էլջին Գրոսքլոուսի «Կարմելիտը» վեպում*

Բանալի բառեր – կարմելիտ, միսիոներ, մահմեդականներ, քրիստոնյաներ, հավատափոխ, պատմական աղբյուր, Զրոքիներ, էքզիստենցիալիզմ, Նոր Զուղա, Կլեմենտ Ութերորդ, Շահ-Աբաս:

Մուտք

Լինելով բազմակողմանի զարգացած և պրպտուն մտքի տեր անձնավորություն՝ ամերիկացի վիպասան **Էլջին Գրոսքլոուսը** (1899–1983) համապարփակ հետաքրքրություն է ցուցաբերել այն երկրների նկատմամբ, որտեղ որոշ ժամանակ ապրել է ճակատագրի բերումով կամ իր ընտրությամբ: Հետագայում գրած իր վեպերում նա գեղագիտական բարձր ճաշակով և համապարփակ ընդգրկմամբ ամերիկյան ընթերցողին է ներկայացրել վերջիններիս պատմության և մշակույթի ուշագրավ էջերը:

Այսպես, Հայաստանում Գրոսքլոուսն անց է կացրել ընդամենը 2–3 ամիս, որոնցից մեկը՝ բանտում, սակայն իր «Արարատ»-ում¹ այնպիսի մանրամասնությամբ ու բանիմացությամբ է նկարագրել հայ ժողովրդի՝ 20-րդ դարասկզբի բարբերը, սոցիալ-քաղաքական կյանքը, ինչպես նաև հարաբերությունները հարևան երկրների, հատկապես Թուրքիայի և Ռուսաստանի հետ, որ կարող է միայն խոր ակնածանք առաջացնել:

Գրոսքլոուսը հայերին չի մոռացել նաև իր մյուս վեպերում, չնայած դրանք ոչ մի կապ չունեն հայ իրականության հետ: Այսպես, «Հրեշը» վեպի հերոսը՝ Աբիգեյլ Քարֆաքսը, գիտի հայերեն², «Սալադինի դաշույնը» վե-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 10.12.2014:

1 Տես **Գրոսքլոուս Է.**, «Արարատ», Եր., «Հայաստան» հրատ., 2005, էջ 152: Տես նաև՝ **Ալբերտ Ա. Մակարյան, Սվետլանա Ռ. Թումանյան**, Էլջին Գրոսքլոուսը և իր «Արարատ» վեպը, 20-րդ դարասկզբի Հայաստանը ամերիկացի գրողի աչքերով, «ՎԷՄ», 2013, N 1(41), էջ 70–116:

2 Տես **Groseclose E.**, The Firedrake, J.B. Lippincott Company, Philadelphia, New York, 1942, p. 22.

պում Բլիսի ընկերներից մեկը՝ Բիրանիկը, հայ է³, «Օլիմպիա» վեպում Եվտրոպիոսը հայ է: Իսկ ահա «Կարմելիտ»-ում վիպասանը ստեպ-ստեպ անդրադառնում է Շահ-Աբասի գահակալության ընթացքում նոր միայն ձևավորվող Նոր Զուղայի կյանքին ու կենցաղին՝ հայերի հանդեպ շահի վարած քաղաքականության պատկերումը դարձնելով դիպաշարի կարևոր շերտերից մեկը:

«Կարմելիտը» պատմափիլիսոփայական վեպ է Շահ-Աբաս առաջինի գահակալության ընթացքում (1587-1629 թթ.) **կարմելիտների՝ Պարսկաստանում ծավալած միսիոներական գործունեության մասին** (1607-1628 թթ.) և հիմնված է միանգամայն հավաստի իրադարձությունների նկարագրության վրա: Վեպի բովանդակության հիմքը կազմող պատմական միջավայրի և կերպարների հիմնական աղբյուրը 1939-ին Լոնդոնում անգլերենով լույս տեսած **“A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVIIth and XVIIIth Centuries”** («Կարմելիտների տարեգրությունը Պարսկաստանում և պապական առաքելությունը 17-18-րդ դարերում») երկհատորյակն է, որի խմբագիր և թարգմանիչ **Հերբերթ Չիքը** շուրջ քսան տարի տարբեր գրադարաններից ու արխիվներից ժողովել, խմբագրել ու թարգմանել է այն բոլոր նամակներն ու հաշվետվությունները, որ թողել էին Պարսկաստանում միսիոներական գործունեություն կազմակերպած կարմելիտները 17-18-րդ դարերում⁴: Է. Գրոսքլոուսը շոայլորեն օգտագործել է կարմելիտների՝ ականատեսի աչքով արձանագրած դեպքերի առանձին հատվածներ, սակայն դրանք վերարտադրել է ոչ թե սոսկ որպես հավատարիմ տարեգիր, այլ վիպասան, ում հաջողվել է պատմական փաստերի շուրջ հյուսել տիպական մանրամասներով հագեցած բազմաթիվ գեղարվեստական տեսարաններ և ստեղծել ճանաչողական մեծ նշանակություն ունեցող վեպ:

1.«Կարմելիտը» վեպի պատմական միջավայրը

Ամերիկացի վիպասան Հարոլդ Լամբը «Կարմելիտը» վեպի մասին իր գրախոսականում գրում է, որ Էլջին Գրոսքլոուսն օժտված է ընթերցողին պատմական անցյալի այնպիսի վայրեր տանելու կարողությամբ, որոնք ամերիկացու համար «չբացահայտված տիրույթներ» են (terra incognita)⁵: Իսկապես, Գրոսքլոուսը վիպական գործողությունների համար ընտրել է մի ժամանակաշրջան, որը գուցեև մեծ հետաքրքրություն չի ներկայացնում լայն հասարակության համար, սակայն նրանում ծավալվող դեպքերը ճակատագրական նշանակություն կարող էին ունենալ ամբողջ եվրոպական քաղաքակրթության համար: **Գրոսքլոուսի վեպը պատկերում է Պարսկաստանի պատմության այն հատվածը, երբ այդ երկիրը դարձել էր հաղթական քայլերով դեպի Արևմուտք արշավող Օսմանյան**

3 Տե՛ս **Groseclose E.**, The Scimitar of Saladin, The Macmillan Company, New York, 1963, p. 32.

4 Տե՛ս **Chick Herbert**, “A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVIIth and XVIIIth Centuries”, Volume 1 and 2, London, 2012, 1376 p.

5 www.jstor.org; The Carmelite by Elgin Groseclose, Review by Harold Lamb; Middle East Journal, Vol. 9, no. 4 (Autumn, 1955), p. 460.

ԳՐԱՎԱՆԱԿԻՑՈՒԹՅՈՒՆ
Զ (ԺԲ) ԳՄԱՐԻ, ԹԻՎ 4 (48) ԽՈՒՐՈՒՄՆԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2014
ՎԷՆ ԽԱՄԱՆԿԱՅԿԱԿԱՆ ԽԱՄԱՐԵՆ

Կայսրությանը Արևելքում գապող միակ պատվարը:

Վեպի բովանդակության ամենակարևոր առանձնահատկությունը պատմական հավաստի միջավայրի ստեղծումն է: Հեղինակին հաջողվել է գեղարվեստական պատկերների միջոցով վերարտադրել դարասկզբի Հռոմը և Շահ-Աբասի գահակալության այն հատվածը, որը համընկնում է այդ երկրում կարմելիստների միսիոներական առաջին առաքելության հետ (1607-1629 թթ.):

Հայերիս համար խիստ հետաքրքիր այդ ժամանակաշրջանում, Շահ-Աբասի գահակալության ընթացքում կատարված պատմական դեպքերի գեղարվեստական նկարագրությամբ, Գրոսքլոուսը իր էքզիստենցիալիստական աշխարհայացքի լույսի տակ փորձել է ներկայացնել մարդու կյանքն Աստծու հետ (հայր Խուան) և առանց Աստծու (Շահ-Աբաս):

Գեղարվեստական մեծ վարպետությամբ գրողին հաջողվել է նկարագրել Կլեմենտ VIII պապի վարած քաղաքականությունը և բոկոտն կարմելիստների նորաստեղծ օրդենի գործունեությունը: Ներկայացնելով Կլեմենտ VIII պապի գահակալության համառոտ պատմությունը (էջ 15)՝ հեղինակն անդրադարձել է Պարսկաստանում միսիոներական առաքելություն նախաձեռնելու նրա շարժառիթներին:

Ըստ պատմական տարբեր աղբյուրների⁶ և «Տարեգրություն»-ում գետեղված նամակների՝ պապի հիմնական նպատակը Թուրքիայի դեմ Պարսկաստանի հետ դաշինք կնքելու հեռանկարն էր: Ու թեպետ կարմելիստները բացառապես մտահոգված էին քրիստոնեական քարոզչություն ծավալելու խնդրով՝ մահմեդականներին հավատափոխ անելու, ինչպես նաև քրիստոնեական տարբեր հարանվանություններին կաթոլիկացնելու նպատակով, պապն իրականում նրանց օգտագործում էր որպես իր դեսպաններ պարսկական արքունիքում: Այս երկակի դերի պատճառով կարմելիստները երբեմն ընդվզել են, սակայն նրանց մեծ մասն ըմբռնել է թուրքերի ներկայացրած վտանգն ամբողջ քրիստոնեական աշխարհի հանդեպ և հաշտվել է այն մտքի հետ, որ ենթարկվելով պապի վարած քաղաքականությանը՝ ամենամեծ ծառայությունն էին մատուցում հավատի պահպանությանը, քանի որ տվյալ պատմաշրջանում իր հզորության գագաթնակետին գտնվող Օսմանյան կայսրությունը սպառնում էր քրիստոնեական քաղաքակրթությանը՝ ի դեմս Կենտրոնական ու Արևմտյան Եվրոպայի:

Հռոմի պապի ու պարսից շահի հարաբերությունների պատմությունը մինչև վիպական բուն գործողությունների սկիզբը ներկայացվում է մասնակիորեն՝ պահպանելով պատմական ճշմարտությունը: Վեպում թռուցիկ ակնարկվում է, որ անգլիացի ազնվական սրբ Էնթոնի Շրլիին Շահ-Աբասին հանդգել էր հզորացող Օսմանյան կայսրության դեմ քրիստոնեական երկրների և Պարսկաստանի միջև դաշինք կնքելու անհրաժեշտության մեջ: Շահ-Աբասը Շրլիին ուղարկել էր Եվրոպա՝ դաշնակիցներ ձեռք բերելու նպատակով, սակայն Եվրոպացի իշխանները չափազանց զբաղված էին իրենց ներքին տարաձայնություններով, որպեսզի թուրքական վտանգի դեմ պայքարեին ընդհանուր ուժերով: Շրլիի առաքելությունն ավարտվել էր նրանով, որ պապն ու շահը բարեկամական մի քանի նամակներ

6 Stū Biography-Pope Clement VIII, www.saint-mike.org/library/papal_library/clementviii/bi

էին փոխանակել, սակայն պապը վստահ էր, որ դեռևս հնարավոր է դաշնակցային հարաբերություններ հաստատել Պարսկաստանի հետ:

Ըստ «Տարեգրության»՝ մինչև կարմելիտների առաքելությունը, Շրլիի և այլ դեսպանների միջոցով պապի և շահի միջև սկզբնավորված դիվանագիտական հարաբերություններն այնպիսի կետի էին հասել, որ նրանք արդեն պայմանավորվում էին տարբեր ճակատներով թուրքերի դեմ ընդհանուր պատերազմ սկսելու մասին: 1601-ին Էնթրնի Շրլիին պապին ուղարկած հաշվետվություններից մեկում թվարկում է քրիստոնեական պետությունների և Պարսկաստանի միջև կոնֆեդերացիա ստեղծելու երեք կետերը, որոնք քննարկվել էին շահի հետ: Ճիշտ է, այդ կոնֆեդերացիան և թուրքերի դեմ միացյալ գործողություններն այդպես էլ իրականություն չդարձան, իսկ մինչև կարմելիտները հասան Պարսկաստան, շահն այլևս նման դաշնակցության կարիք չուներ, որովհետև սեփական ուժերով կարողացել էր թուրքերից հետ վերցնել իր նախնիների կորցրած տարածքները: Ուստի շահի և պապի միջև դիվանագիտական բարդ հարաբերությունները վեպում պատկերվող ժամանակահատվածում շարունակվել են փոփոխական հաջողություններով:

Արձակագիրը հարաբերությունների այս կողմը ներկայացնելիս մասնակիորեն հեռանում է պատմական աղբյուրներից, որովհետև հեռավոր անցյալի դրամատիկ իրադարձությունների նկարագրությունը է. Գրոսբլոուն օգտագործել է նաև իր աշխարհայացքային սկզբունքներն արտահայտելու համար: Պապի կողմից ոչ մի հոգևոր կոչում չունեցող կարմելիտներին դեսպան ուղարկելու հանգամանքը վիպասանը բացատրում է հենց այն փաստով, որ պապն իբր՝ մտադիր չէր ռազմական դաշինքի մեջ մտնել Պարսկաստանի հետ: Կարմելիտներին ուղղված իր խոսքում պապն ընդգծում էր, որ վճռել է աղքատ կենսակերպ որդեգրած բոկոտն կարմելիտներին ուղարկել պարսկական արքունիք, որպես հզոր պապական իշխանության դեսպաններ, որպեսզի «այդ հեթանոսը հասկանա, որ մեր իշխանությունը հոգևոր է, և մենք մեր տրամադրության տակ չունենք ռազմական ուժ, ...որ մեր հիմնական նպատակը Քրիստոսի հոգևոր թագավորության տարածումն է» (էջ 16):

Է. Գրոսբլոուն իդեալականացրել է Կլեմենտ VIII պապի նպատակները կարմելիտների պարսկական առաքելության հարցում: Պապը կարմելիտների առջև երեք խնդիր էր դրել: Նրանք պետք է համոզեին շահին հրովարտակ ընդունել, որով հայերը և մյուս քրիստոնյա փոքրամասնություններն իրավունք կունենային ազատորեն քրիստոնեություն դավանելու, ձեռք էին բերելու քրիստոնեական միաբանություն բացելու շահի թույլտվությունը և քրիստոնեությունը տարածելու էին Պարսկաստանում: Հայերի և քրիստոնյա փոքրամասնությունների բարօրության հարցը ներկայացնելով որպես պապի մտահոգության գերխնդիր՝ գրողը կարծես ցանկացել է խմբագրել պատմությունը, ցանկալին ներկայացնել որպես իրական:

«Տարեգրության» էջերում տեղ գտած բազմաթիվ նամակներից պարզ երևում է, որ Կլեմենտ VIII պապի քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը պարսկական թագավորության սահմաններում

ԳՐԱՎԱՆԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ
2 (ՃԲ) ԳՄՔԻ, ԹԻՎ 4 (48) ԽՈՒՄԵՆԻՔ-ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2014
ՎԷՆ ԽԱՄԱՆԱԿԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՈՒՆ

բնակվող քրիստոնյաներին, հիմնականում՝ հայերին, կաթոլիկ եկեղեցու հետ միավորելն է եղել: Սակայն դա կհակասեր գրոսքլոուսյան սիրո և հանդուրժողականության գաղափարին, ուստիև նա կերտել է հայերի ճակատագրով անշահախնդրորեն մտահոգ քրիստոնյա հովվապետի կերպար, որին հակադրվում է դաժան, դյուրագրգիռ ու անկանխատեսելի բռնակալը, որի մահմեդական էությանը խորթ է զոջալու, հանդուրժելու և հոգին փրկելու քրիստոնեական սկզբունքը:

Գրոսքլոուսի գլխավոր հերոս Խուան Թադեուսը չորս այլ կարմելիտների հետ լքում է իր միայնակ զնդանի երանելի խաղաղությունը, որտեղ հանապազօրյա բարեպաշտ աղոթքներով հաղորդակցվում էր աստվածային ճշմարտություններին, ամենօրյա պարտադիր կարգով մաքրում իր հոգին ամեն տեսակի մեղքերից, և Ռուսիայի ճանապարհով ուղևորվում Պարսկաստան՝ իր կյանքի օրինակով մահմեդականներին հասու դարձնելու քրիստոնեության առավելություններին: Ճանփորդությունը տևում է երեք տարի: Հինգ կարմելիտներից երկուսը, չլիմանալով ռուսական դաժան սառնամանիքներին, ճանապարհին վախճանվում են, մյուսները, անտանելի դժվարություններ կրելով, ի վերջո հասնում են Պարսկաստան:

Խուան Թադեուսի միսիոներական գործունեության մանրամասն նկարագրության հետ մեկտեղ՝ Գրոսքլոուսը ներկայացնում է Շահ-Աբասի գահակալության տարիների երկու բնորոշ կողմ՝ ընդհանրացնելով դրանք երկու տեսարաններում. շահի վարած քաղաքականությունը հայերի նկատմամբ (Ջրօրհների նկարագրություն) և շահի մղած պատերազմների ռազմավարությունը: Պատմական կոլորիտ ստեղծելով հանդերձ՝ այս տեսարանները բացահայտում են միապետի բարդ անհատականության տարբեր կողմերը:

Հայերի հարցն առաջին անգամ շոշափվում է շահի հետ կարմելիտների առաջին իսկ հանդիպման ընթացքում և այնուհետև շահի կողմից անընդհատ շահարկման առարկա է դառնում: Այդ հանդիպման ժամանակ շահին ապշեցնում է, որ բովանդակ կաթոլիկ աշխարհի առաջնորդը աղքատ, կրոնական ոչ մի կոչում չունեցող «ղերվիշների» է ուղարկել, որպեսզի նրանք ներկայացնեն Հռոմի հզոր պապի իշխանությունը պարսկական արքունիքում: Եվ դա այն դեպքում, երբ պապին ուղարկած իր նամակներում նա հատուկ գրել էր, որ իրեն ուղարկեն Եպիսկոպոսի աստիճան ունեցող հոգևորականի, որ վերջինս իր թագավորության մեջ ապրող հայերին հովվություն աներ: Առավել ևս, երբ շահը տեղյակ էր, որ Արևմուտքում պարսկական արքունիքի շքեղության մասին լեգենդներ էին պատմում, որին ինքն էլ էր նպաստում՝ Եվրոպա ուղարկած իր դեսպանների հետ թանկարժեք և արտառոց նվերներ ուղարկելով Եվրոպական մեծամեծերին:

«Տարեգրություն»-ում ընդգրկված կարմելիտների, իսկ նրանցից առաջ՝ պորտուգալացի ավգուստինյանների նամակները, որոնք յուրահատուկ հաշվետվություններ են, բավականին մանրամասն և շատ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում Պարսկաստանում գործող միսիոներական տարբեր ընկերությունների հետ հայերի բարդ ու լարված հարաբերությունների և այդ հարցում շահի վերաբերմունքի մասին: Գրոսք-

լռուսը գեղարվեստական վերամշակման է ենթարկել այդ տեղեկությունների միայն մի կողմը: Հայր Պողոս-Սիմոնը, ով գլխավորում էր կարմելիտների առաքելությունը Պարսկաստանում, Կլեմենտ VIII-ին հաջորդած պապ Պողոս V-ին ուղարկած իր երկար հաշվետվության մեջ հայտնում էր, որ շահն իրենց երկրորդ հանդիպման ժամանակ, որի ընթացքում քննարկել էին թուրքերի դեմ նոր պատերազմ սկսելու շահի ծրագրերը, հայտնել է, թե ցանկանում է, որ «Ձերդ բարձրությունը կաթոլիկ եպիսկոպոս ուղարկի «երեք եկեղեցիների» համար (այդպես են նրանք անվանում նոյյան լեռան ստորոտում գտնվող այն եկեղեցին, որը հայերի սրբավայրն է Մեծ Հայքում և Հայոց հայրապետի նստավայրը), քանի որ այժմ եկեղեցին հայրապետ չունի, որովհետև շահը նրան գահընկեց է արել»⁷: Սիմոն-Պողոսը շահի այս առաջարկին խուսափողաբար է պատասխանում. կանի այն, ինչ պապը կհանձնարարի իրեն, քանի որ հայերն ու ավգուստինյան հայրերը խորհուրդ էին տվել զգուշանալ շահի հետ հայերի խնդիրը քննարկելուց, որովհետև նա այդ կերպ կարող էր ցանկանալ պարզել, թե արդյո՞ք իրենք հենց այդ նպատակով էին ժամանել Պարսկաստան:

Պատմական այս անցքի՝ Գրոսքլոուսի առաջարկած գեղարվեստական տարբերակում Հայոց կաթողիկոսի հարցը քննարկվում է առաջին իսկ հանդիպման ժամանակ, և Պողոս-Սիմոնը տալիս է նույն խուսափողական պատասխանը: Երկրորդ հանդիպման ժամանակ հայր Պողոսը ներկայացնում է պապի մտահոգությունը շահի քրիստոնյա հպատակների, հատկապես հայերի վերաբերյալ և հիշեցնում նրան քրիստոնյաներին կրոնական ազատություն տալու՝ պապին տված խոստումները: Շահը նորից խոսում է կաթոլիկ հայրապետի անհրաժեշտության մասին, որը «կուժեղացներ նրանց հավատը և կպարզեցներ իմ հարաբերությունները նրանց հետ» (էջ 64): Հայր Պողոսը հարկ չի համարում բացատրել շահին, որ Հռոմի պապի ազդեցությունը բովանդակ քրիստոնյա աշխարհում խարխլվել է, և անցել են այն օրերը, երբ հնարավոր էր այլախոհներին ստիպել ընդունելու Հռոմի իշխանությունը: Ըստ Գրոսքլոուսի պատկերացրած կրոնական իդեալական համակարգի՝ պապը ոչ մի պարագայում չէր փորձի իշխանություն ստանձնել այնպիսի մի քրիստոնեական եկեղեցու նկատմամբ, ինչպիսին հայկականն էր, առանց նրա ազատ ընտրության (էջ 64): Մինչդեռ կարմելիտների պատմական հաշվետվություններում «ազատ ընտրություն» եզրն ընդհանրապես չի շոշափվում:

Վեպի էջերում բազմիցս հիշատակվում է հայկական **Ջուղա** քաղաքը. «Ջուղան արվարձան էր գետի մյուս կողմին, որտեղ շահը բնակեցրել էր հայ ճարտարապետների և արհեստավորների, որոնց տեղափոխել էր Կովկասից՝ շինարարական աշխատանքներ կատարելու համար: Այն առանձին, բարգավաճ քաղաք էր, որ հիմնական քաղաքի հետ միանում էր շահի գլխավոր սարդարի՝ վրացի Ալլահ Վերդի խանի անունով կոչվող մի հոյակերտ, ընդարձակ կամրջով» (էջ 55):

Կարմելիտներն իրենց նամակներում անհամեմատ ավելի շատ պատմական տեղեկություններ են հաղորդել Նոր Ջուղայի ստեղծման իրական

7 Նույն տեղում, էջ 125: Խոսքն, անշուշտ, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի մասին է:

ԳԼՎԱՆԱԿԻՏՈՒՅՈՒՆ
2 (ՃԲ) ԳՄՔԻ, ԹԻՎ 4 (48) ԽՈՒՄԵՆԻՆԵՐ-ՂԵՂԵՄԵՆԻՆԵՐ, 2014
ՎԷՆ ԿԱՏԱՆԱԿԱԿԱՆ ԿԱՆՈՒՆ

պատմության և տեղահանված հայերի կրած տանջանքների մասին⁸:

Չնայած Գրոսբլոուսը Շահ-Աբասի պատերազմական գործողությունները նկարագրելիս շատ պատկերավոր է ներկայացնում «այրված հողի» քաղաքականության հետևանքները (էջ 187), նա ոչ մի տեղ չի հիշատակում, որ այդ անողոք մարտավարության զոհերը նաև հայերն են եղել, և որ Ջուղայի հայերը հենց այդպես են իրենց հարազատ երկրից «տեղափոխվել» Պարսկաստան, փաստ, որը հիշատակվում է և՛ արևմտյան, և՛ հայկական պատմագիտության մեջ. «Ջորջերին հրամայված էր տեղահանել և Իրան քշել ինչպես մահմեդական, այնպես էլ քրիստոնյա բնակչությանը, սակայն տեղահանվածների հիմնական զանգվածը կազմեցին հայերը: ...Բռնագաղթն իրականացվում էր անողոք դաժանությամբ, որպեսզի ապահովվի գործողության արագությունը, և բացառվի դիմադրության ամեն մի փորձ: Տեղահանման ենթակա էին բոլորը՝ առանց սեռի, տարիքի ու դավանանքի խտրության: Ըստ որոշ տվյալների՝ Հայաստանից տարագրվածների թիվը հասնում էր մոտ 400 000-ի, որից մոտ կեսն է միայն հասել Իրան, իսկ մնացած մասը խեղդվել է Արաքսի ջրերում կամ ճանապարհներին ոչնչացել սովից, ցրտից ու գրկանքներից»⁹, գրում է պատմաբան Վահան Բայբուրդյանը:

Հայերին վերաբերող մնացած դրվագներում, հատկապես Ջորջների տեսարաններում Գրոսբլոուսը գեղարվեստական երկի սահմաններում բավական անաչառ կերպով է պատկերում Շահ-Աբասի վարած քաղաքականությունը, իսկ պատերազմական միակ մանրամասնորեն նկարագրված տեսարանի նպատակը Շահ-Աբասի դաժանությունն ու նենգությունն ավելի պատկերավոր ներկայացնելն է:

Գրոսբլոուսը տեղին է նկատում, որ երկրի ներքաղաքական կյանքում առաջացած ցանկացած բախման ժամանակ Ջուղայում ապրող հայկական համայնքը մահացու սարսափ էր ապրում, քանի որ մոլեռանդ մահմեդականները հենց որ քրիստոնյաների նկատմամբ իրենց զգացմունքներն արտահայտելու թեկուզ և ամենաչնչին ազատություն էին ստանում, ի վերջո, իրենց հայացքն ուղղում էին հայերի կողմը, եթե նույնիսկ հայերը ոչ մի կապ չունեին դրա պատճառների հետ: Վիպասանը նկարագրում է երկու տեսարան, որոնցում հայերը քիչ էր մնում՝ քավության նոխազ դառնան մոլեռանդ խաժամուժին: Հեղինակը խորաթափանցությամբ և հմտորեն հասկացնում է, որ հենց շահն է կույր ամբոխին գրգռում հայերի դեմ, և դա նա անում է հաշվենկատ հեռատեսությամբ: Նման վտանգների ժամանակ հայերը փակվում են իրենց տներում: Միսիոներների հետ շահի հաշվեհարդարի տեսարանի նկարագրության ժամանակ հայերը նորից կանգնում են անմեղ զոհ դառնալու վտանգի առջև, բայց շրջահայաց Ալլահ Վերդու ուղարկած ղզլբաշները փակում են Նոր Ջուղա տանող բոլոր փողոցները¹⁰:

8 Նույն տեղում, էջ 99-100:

9 **Բայբուրդյան Վահան**, Իրանի պատմություն, Եր., 2005, էջ 319:

10 Ալլահ Վերդու այս արարքի մասին չհաջողվեց հիշատակություն գտնել մեզ հայտնի պատմական որևէ աղբյուրում, բայց սա հավանաբար պատմական իրողություն է: Հենց դա էլ լրացուցիչ վկայություն է, որ Ալլահ Վերդի խանը, ով վեպում համարվում է վրացի, իրականում հայ է եղել, ինչպես ներկայացրել է Վահան Բայբուրդյանը:

2. Պատմական փաստերը ներկայացնելու՝ Գրոսքլոուսի արվեստը

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014
4 (48) տարի, թիվ 4

Զ (ՃԲ) փաստի, թիվ 2
ՎԷՄ համահայկական հանդես

«Կարմելիտ»-ում պատկերված Զրօրհենքի նկարագրության և դրա համար հիմք դարձած սկզբնաղբյուրի համեմատությունը վառ կերպով ցույց է տալիս, թե ինչպես է Գրոսքլոուսն օգտագործել պատմական նյութը՝ գեղարվեստական պատկեր ստեղծելու նպատակով: Անտարակույս, տոնի նկարագրության համար հիմք է ծառայել «Տարեգրության» փաստաթղթերից մեկը, որի հաղորդած սեղմ տեղեկությունները հեղինակը դարձրել է գեղարվեստական մանրամասներով հարուստ մի գեղեցիկ տեսարան:

«Շահր Զուղայից Սպահան տանող ճանապարհի վրա պահակագոր էր կարգել, որպեսզի միայն մեծամեծերն իրենց ձիերով կարողանային մասնակցել հանդիսությանը: **Հարյուրից ավելի արծաթյա և որձաքարե խաչեր Զուղայի տասը և Սպահանի երկու գրիգորյան եկեղեցիների հոգևորականների** ուղեկցությամբ հանդիսավոր երթով բերվեցին **գետափ**, որտեղից էլ՝ գետի ծանծաղ ջրերի միջի փոքրիկ կղզյակը: Յուրաքանչյուր խաչի հետևից քայլում էին տարբեր գույների ոսկեգօծ հանդերձներ հագած **ոչ պակաս քան չորս կղեր**, որոնց հետևում էին **մոմակիրները: Հայերից և պարսիկներից կազմված ամբոխը խմբվել էր գետափին և դիտում էր ծիսակատարությունը: Մինչ կապասեին շահի ժամանմանը**, ով եկավ ուշ՝ իր որդիների և նախարարների ուղեկցությամբ, **հավաքվածները պարում էին և խաղեր խաղում**»¹¹:

«Տարեգրությունից» մեջբերված այս հատվածի ընդգծված մասերը վիպասանը մեծ վարպետությամբ լրացրել է պատկերավոր մանրամասներով և ստեղծել հետաքրքիր ու ճանաչողական մի տեսարան, որտեղ ընթերցողի համար հատկապես ուշագրավ է հայկական տոնի, հիրավի, շքեղ պատկերը: Վեպից թարգմանաբար մեջբերված հետևյալ հատվածում ընդգծված մասերը համապատասխանում են «Տարեգրության» փաստաթղթի հաղորդած հավաստի տեղեկություններին:

«Հայկական Զուղա գաղութի հիմնադրումից ի վեր Խաչատուրանը նշվում էր Զեյանդեհ Ռուդ գետի ափին՝ **բազմաթիվ դիտորդներ հրապուրելով Սպահանից**: Աբասը, ցուցադրելով իր մեջ վերջերս առաջացած մտահոգությունը քրիստոնյա հպատակների նկատմամբ, հայտարարել էր, թե մասնակցելու է մոտեցող տոնակատարությանը: Ժողովրդի հետաքրքրությունը բազմապատկվել էր, և հայերը պատշաճորեն պատրաստվել էին արքայավայել տոնակատարություն կազմակերպելու համար:

Եղբայր Խուանին տեղեկացրել էին, որ շահին ցանկալի է նրա ներկայությունը, և պատարագի օրը՝ վաղ առավոտյան, նա արդեն Ալի Գափուում էր: Աբասը հագուստի նկատմամբ ոչ սովորական ուշադրությամբ, սատինե տաբատ և վառ կարմիր բաձկոն էր հագել, դրել էր նաև

¹¹ "A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVIIth and XVIIIth Centuries", London, 1939, p. 245.

տասներկուծալքանի իր նշանավոր չալման՝ փետրափնջով ու գմբուխտյա ճարմանդով: Նա պալատից դուրս եկավ մարտական ձերմակ ձի հեծած՝ շեփորների և կարմրագգեստ զինվորների ուղեկցությամբ: Շեփորների կանչը, թմբուկների զարկը և ժողովրդի աղաղակը լցրել էին կիրակնօրյա առավոտը, բազմաթիվ դրոշներ գեփյուռից ծածանվում էին, իսկ ձիերի կարմիր փետրափնջերը ոստոստում էին նրանց վարգին համընթաց: Հազարավոր բերաններից հնչող ողջույնի բացականչությունների տակ հեծյալների խումբը շարժվեց Չահար Բաղի երկարությամբ և կտրեց-անցավ երեսուներեք նրբագեղ կամարների վրա ձգված Ալլահ Վերդի խան կամուրջը:

Կամրջից վերև՝ գետափին, բաց տարածություն էին առանձնացրել շահի և նրա շքախմբի համար: **Ամբողջ գետի երկայնքով մեծ թվով մարդիկ դիտում էին արարողությունը: Այս մարդկանց զվարճացնելու նպատակով խաղեր, պարեր և շարականների երգեցողություն էր կազմակերպվել, մինչ շահը կժամաներ**, իսկ երբ շահն իջավ կամրջից, շարականների հնչյունները խեղդվեցին մարդկանց բացականչությունների հորձանուտում:

Միապետին դիմավորում էին հայկական համայնքի առաջնորդները: Մրանց մեջ գլխավորն, իհարկե, քահանայապետն էր՝ փառահեղ մարգարտածածկ շուրջառով և խույրով, որը պսպղում էր խիտ ասեղնագործված ռուբինների և գմբուխտների փայլից: Նրա շուրջը խմբվել էին **Ջուղայի տասը գրիգորյան և Սպահանի երկու եկեղեցիների հոգևորականները՝ մոմակիր դպիրների ուղեկցությամբ**: Քահանայապետի առջև շարվել էին սպիտակագգեստ **խաչ կրողները՝ թվով հարյուրից ավել՝ ամեն մեկը մի արծաթե և որձաքարե խաչ բարձր պահած**» (109):

Այնուհետև «Տարեգրություն»-ից տեղեկանում ենք, որ «Աբաս Առաջինը հետևեց քահանայապետ Մելչիզաղեքին դեպի գետի ջրերը և անհանգիստ անձնավորություն լինելով՝ **իր վրա վերցրեց քրիստոնեական այս տոնակատարության արարողապետի պարտականությունը**: Նա սկսեց ցուցումներ տալ, թե որտեղ պիտի կանգնի քահանայապետը, որտեղ պիտի նշվի ծիսակատարությունը, **ինչպես պիտի շարվեն հոգևորականներն ու խաչակիրները**, որպեսզի **ամբոխի կուտակումներ** չլինեն, և նմանատիպ այլ մանրամասներ: Բուն ծիսակատարության կարգով՝ աղոթքներն արտասանելուց հետո ջրի մեջ մեռն էին լցնում, ապա բոլոր խաչերը սուզում էին գետի մեջ: Այդ պահին նվիրված հավատացյալները մերկանում էին և մտնում գետը»¹²:

Շահ-Աբասն իր տարօրինակ վարքով Գրոսբլոուսին անգնահատելի հնարավորություն է ընձեռել պատկերելու միապետի հայատյաց էությունն ու քրիստոնեության նկատմամբ կեղծավոր հետաքրքրությունը:

«Երբ շահը շարժվեց դեպի հավաքվածները, քահանայապետը պատրաստվեց փովել նրա առջև, սակայն Աբասը ձեռքով կանխեց նրան՝ ձիուց իջնելով և անկեղծորեն բացականչելով.

- Սու՛րբ հայր, այդ ես պետք է ծնկեմ ձեր և այս սուրբ խաչերի առջև: Եվ շահը համեստորեն գլուխը խոնարհեց:

¹² Նույն տեղում:

Քահանայապետը կակազելով արտաբերեց իր ողջույնի խոսքերը.

- Ձերդ բարձրությունը շատ... շատ ողորմած է մեր այս տոնակատարությունն իր այցելության պատվին արժանացնելու համար: Մենք ... մենք երախտապարտ ենք և ողջունում ենք Ձեզ մեծագույն ուրախությամբ:

- Ուրեմն թու՛յլ տվեք դիտել այս սուրբ ծիսակատարությունը՝ որպես օրինյալ Հիսուսի ամենահեզ ապաշխարողներից և նվիրյալներից մեկը:

... Քահանայապետը, շահի ներկայությունից շփոթահար, շարժվեց դեպի գետի եզրը և հագիվ սկսեց երգել պատարագի բառերը, երբ Աբասը ոտքի ելավ, նետվեց դեպի գետն ու հասարակ պալատականի պես երկյուղած դիմեց քահանայապետին.

- Թու՛յլ տվեք առաջարկել Ձերդ մեծությանը, որ ամբոխը դեռևս պատշաճ վիճակում չի գտնվում այսքան սուրբ արարողությանը վայել պատկառանք ցուցադրելու համար: Աղաչում եմ Ձեզ, մի պահ հապաղեք, մինչև խաղաղվեն:

Եվ նա հրամայեց ղզլբաշներին հետ հրել ժողովրդին և պահանջել, որ բոլորը ծնկի իջնեն: Ապա նա գլխով քահանայապետին սկսելու նշան տվեց: Հագիվ էր Մելչիզադեքը պատարագն սկսել, երբ Աբասը երկրորդ անգամ ընդհատեց նրան, որպեսզի առաջարկի, որ հոգևորականները մի քիչ ավելի հետ քաշվեն, որ հանդիսատեսը կարողանա տեսնել արարողության բոլոր մանրամասները: Ապա նրան անհանգստացրեց խաչերը բռնելու ձևը, և նա ցույց տվեց դպիրներին, թե ինչպես պիտի խաչերը տանեն դեպի գետեզրը» (110):

Ջրօրհների տոնակատարության հետագա նկարագրությունը վկայում է հեղինակի՝ հայկական մշակույթի և ավանդույթների լավ իմացության մասին: Տոնակատարության նկարագրությունից հետո Գրոսբլոուսը մասնակի փոփոխություններով, որոնք բացահայտում են նաև շոշափվող կրոնական հարցերի վերաբերյալ հեղինակային տեսակետը, շարունակում է «Տարեգրությունում» հաղորդված անցուդարձի գեղարվեստական նկարագրությունը:

Պատմական աղբյուրում կարդում ենք հետևյալը. «Երբ ծիսակատարությունն ավարտվեց, Աբաս Առաջինը՝ դեռևս շրջապատված խաչակիրներով, կանգնել հարցաքննում էր հայ առաջնորդներին, թե արդյոք ո՞ւմ էին հայերն ավելի լավ քրիստոնյաներ համարում՝ վրացիներին, թե ֆրանկներին: Սրան խոջա Նազարը դիվանագիտորեն պատասխանեց, թե առաջինները ավելի լավ էին ծոմ պահում: Այս շահի համար ամեն տեսակի ծոմապահություն նողկալի էր, և այսպիսով նա ձգգրտեց իր հարցը՝ ասելով, թե նկատի ուներ կրոնական կանոնների պահպանությունը և ծեսերի մատուցումը: Սրա վրա խոջա Նազարը գովաբանեց լատինականը: **Ապա Աբբասը ցանկացավ իմանալ կարմելիտների վիկարի կարծիքն այն մասին, թե ով է ավելի լավ քրիստոնյա՝ հայերը, թե վրացիները, և հայր Ջոն Թադեուսը իր ձայնը տվեց հայերին»¹³:**

Պատմական այս անցքն ահա գեղարվեստական ինչպիսի հանդերձանք է ստացել վեպում.

« -Մենք երկու քրիստոնեական աղանդ ունենք իմ կայսրությունում,-

13 Նույն տեղում:

ասաց Աբբասը՝ նկատի ունենալով ուղղափառ վրացիներին և գրիգորյան հայերին:– Սրանցից ո՞ր մեկին եք ավելի իսկական քրիստոնյա համարում:

Հայր Խուանը տատանվեց՝ չցանկանալով վիճաբանության մեջ ներքաշվել:

– Դա Աստված կարող է ասել, բայց մարդու հավատը կարևոր է, քանի որ ինչին մարդ հավատում է, այն էլ ուղղորդում է նրա վարքը: Որպես կաթոլիկ՝ ես հավատում եմ, որ կաթոլիկ եկեղեցին է պարունակում ամենամաքուր ձշմարտությունը, և կարծում եմ, հայկականն ամենից մոտ է այդ ձշմարտությանը» (էջ 111):

«Տարեգրության» այս փաստաթղթի մնացած մասը ևս հարկ ենք համարում թարգմանաբար մեջ բերել՝ ընդգծելով այն մասերը, որոնք հեղինակի կողմից օգտագործվել են տեսարանն ավարտելու համար.

«Քանի որ **անձրևն ուժեղացավ**, և փողոցները ցեխոտվեցին, պարսիկ միապետն իր անմիջական մտերիմների և երեք կաթոլիկ միսիոներների հետ տեղափոխվեց խոջա Սաֆարի՝ **ամենանշանավոր հայի տունը և այնտեղ անցկացրեց օրվա մնացած մասն** ու գիշերը: Այստեղ **կրոնական հարցերի շուրջ խոսակցության ժամանակ** Շահ-Աբբասը մի քանի անգամ պնդեց, որ «ով չի հավատում Հիսուս Քրիստոսին և չի հավատում, որ Հիսուս Քրիստոսն Աստծու հոգին է, «գյավուր» է՝ անհավատ: Ի լրումն, **նա ցանկացավ տեսնել սրբերի որոշ մասունքներ**, որոնք բերվել էին Հայաստանից, երբ Ջուղայի ժողովուրդը վերաբնակեցվել էր Սպահանում: Եվ **երբ շուրջառներ հագած մի քանի քահանա՝ մոմերը ձեռքներին, մասունքները ներս բերեցին, Աբբասը վեր կացավ, մասունքները համբուրեց և դրեց գլխին**, ապա աղաչեց իր շուրջը հավաքվածներին հարգանքով ոտքի կանգնել այդպիսի սուրբ առարկաների առջև՝ նրանց իսկապես գրեթե այնպիսի պատվի արժանացնելով, ինչպիսին կաներ քրիստոնյա իշխանավորը:

Էլ ավելի զարմանալի էր այն, որ շահը որոշեց, որ **սուրբ Հռիփսիմեի՝ հայերի նշանավոր կույսի և նահատակի մասունքի մի կտորը պիտի նվիրի հայր Ջոն Թադևոսին և ոչ միայն ձեռքով հպվեց, այլև ջարդեց սրբի ոսկորն իր սեփական ձեռքերով** և մի մաքուր թղթի կտորի մեջ այն փաթաթելով՝ **հանձնեց կարմելիտին**: Հայ հոգևորականներն այս ամենը սառնասրտորեն հանդուրժեցին, մինչդեռ ներկա գտնվող ավգուստինյան երկու եղբայրները **վրդովվեցին**»¹⁴:

Այս դրամատիկ իրադարձությունը դարձել է նույնքան դրամատիկ և շահին բնութագրող գեղարվեստական պատկերի հիմքը: Գրոսսլոուսն ընդգծումներով նշված պատմական իրողությունները բարձրակարգ վիպասանի գրչին վայել վարպետությամբ ու պարզ անմիջականությամբ միահյուսել է գեղարվեստական մանրամասների հետ և հավատարիմ մնալով սկզբնաղբյուրի հաղորդած տեղեկություններին՝ ստեղծել է պարսից շահի ու հայ հոգևորականների գեղարվեստական տիպարներ.

«**Անձրևն սկսել էր կաթկթել**, և քահանայապետը, ով այս ամբողջ ժամանակ կանգնած էր, հոգնածության նշաններ էր ցույց տալիս: Աբբասը նկատեց, որ ծերունին օրորվում է, և նրան օգնության նետվեց՝ պահելով

¹⁴ Նույն տեղում:

Տուփը պարունակում էր կանացի նուրբ ճաճանչուկը և արմունկուկը՝ դաստակի և ձեռքի ոսկրերի հետ: Ձեռքի ոսկորները բաժանվել էին նախաբազկից, բայց ճաճանչուկն ու արմունկուկը թղթի բարակության պատճառով դեռևս իրար հետ միացած էին: Ոսկորները ձերմակ էին, ինչպես փղոսկր, համարյա թափանցիկ, ասես փայլեցված լինեին:

Աբասը մեծագույն ակնածանքով նայեց այս իրերին: Ապա կռանալով բարձրացրեց ճաճանչուկը և արմունկուկը, համբուրեց և, ի նշան մեծարանքի, դրեց գլխին:

– Ա՛հ, հափշտակված շնջաց շահը,– հոգին մաքրվում է և երկինք սավառնում այս առարկաներին նայելիս: –Ապա նա դիմեց հայր Խուանին, – դուք ձեր հայրենիքից հեռու եք ապրում, հոգևոր խաղաղություն պարզևող աղբյուրներից հեռու: Դուք չպիտի հրաժարվեք այն հանգստությունից, որ հաղորդում են այս իրերը: Քահանայապետի թույլտվությամբ, սրանցից մեկը կհանձնեմ ձեր պահպանությանը:

Աբասը նայեց քահանայապետին, բայց ծերունին չափազանց ուժասպառ և սարսափահար էր, որպեսզի բողոքեր: Հայր Խուանը չէր հասկացել՝ ինչ նկատի ուներ շահը, մինչև չտեսավ, թե ինչպես նա **վերցրեց նախաբազուկը և անսպասելիորեն ճաճանչուկը բաժանեց արմունկուկից, ապա արմունկուկը տվեց իրեն**» (112-113):

Գրոսբլրուսը չի բավարարվում պատմական իրադարձությունները հավատարմորեն վերարտադրելուց: Նա ավելացնում է մի վերջին փոքրիկ դիպված, որը եզրափակում ու ամբողջացնում է շահի վերաբերմունքը հայերի նկատմամբ: Ջուդայից Սպահան վերադառնալու ճանապարհին մթության միջից մի նետ սրընթաց թռչում է Աբասի ուղղությամբ: Այն խփում է նրա ձիուն: Գետնին ընկած ու կատաղած շահը գոռում է, թե Ջուդան կայրի, գետնին կհավասարեցնի: Բարեբախտաբար, միայն հայերը չէին, որ ատում էին շահին: Նետն արձակել էր նրա նախկին հարձերից մեկը, սակայն կատաղությունից և ատելությունից կուրացած շահը հրաժարվում է հավատալ, որ հայերի մատը խառը չէ այդ «դավադրությանը», իսկ սարսափահար հայերը մի որոշ ժամանակ չեն լքում իրենց օթևանները:

«Կարմելիտը» վեպում նկարագրված պատմական իրադարձությունների պատկերման հարցում արձակագիրը հիմնականում կիրառել է իրականի ու գեղարվեստականի վերոբերյալ ընդելուզումները: Այս առումով նրան հաջողվել է պատմության տրամադրած նյութը տեղափոխել գեղարվեստական գրականության դաշտ, և, որ ամենակարևորն է, միաժամանակ բացահայտել հայոց և պարսից ինքնությունը:

3.«Կարմելիտը» վեպի կրոնափիլիսոփայական շերտը. Խուան Թադեուսի կերպարը

«Կարմելիտը» վեպի բովանդակությունը հիմնականում ծավալվում է Հայր Խուան Թադեուսի՝ Պարսկաստանում ծավալած միսիոներական գործունեության շուրջ: Պատկերելով մահեմեդական երկրում կարմելիտ

միսիոների ամենօրյա ջանքերը կլեմենտ VIII պապի՝ վերը նշված երեք հանձնարարությունների իրականացման ուղղությամբ՝ հեղինակը վերացարկման միջոցով արտահայտում է մարդկային կյանքում հավատի դերի մասին իր գաղափարները: Գրոսքլոուսի խորին համոզմամբ՝ առօրյա կյանքում մարդու գործողությունները պայմանավորված են նրա՝ այս կամ այն կրոնին հետևելու հանգամանքով: Հավատը հենց այն անկյունաքարն է, որի վրա կառուցվում է մարդու բարոյական աշխարհը: Փիլիսոփայական այս գաղափարներն են բացատրում նրա բոլոր կերպարների գործողությունները:

Պապի առաջին հանձնարարությունը՝ Պարսկաստանում ապրող հայերին և մյուս քրիստոնյա փոքրամասնություններին դավանանքի ազատություն թույլատրող հրովարտակ ձեռք բերելու մասին, շահի կողմից բազմիցս դառնում է շահարկման առարկա: Աբասը շարունակ խոստանում է նման փաստաթուղթ, սակայն որքան հաճախ խոստանում է, նույնքան հաճախ էլ ձևացնում է, թե «մոռանում» է:

Այն տեսարանները, որտեղ է. Գրոսքլոուսը նկարագրում է, թե ինչպես է Շահ-Աբասը շահարկում հայերին կրոնական ազատություն տալու՝ Խուան Թադեուսի բազմաթիվ միջնորդությունները, կարելի է համարել վեպի ամենահաջողված մասերից, քանի որ դրանք մի կողմից՝ դիպուկ ու պատկերավոր ներկայացնում են խորամանկ շահին, մյուս կողմից՝ համարձակ, աննկուն ու համառ միսիոներին:

Ինչպես արդեն նշվել է, գրողը որոշակիորեն սրբագրել է պատմական տեքստում ընդգրկված նյութերը հայերի նկատմամբ պապի քաղաքականության հարցում՝ կաթոլիկ աշխարհի հովվապետին ներկայացնելով որպես ընդհանրապես քրիստոնյաների ձակատագրով անշահախնդիր կերպով մտահոգվող հովանավոր հայր: Արձակագրի նպատակն ակնհայտ է. ընթերցողին ներկայացնել ոչ թե քրիստոնեական կրոնի ներսում գոյություն ունեցող տարածայնությունները, այլ ճիշտ հակառակը՝ քրիստոնեության և իսլամի հակասությունները:

Քանի որ Խուան Թադեուսը շատ շուտ ըմբռնում է, որ պապի երկրորդ հանձնարարությունը՝ Պարսկաստանում միաբանություն հիմնելու պաշտոնական իրավունքը, նույնպես առայժմ հնարավոր չէ իրականացնել, որոշում է, որ ստեղծված հանգամանքներում իր ամենակարևոր պարտականությունը Քրիստոսի եկեղեցու համար նորադարձներ նվաճելն է: Վստահ, որ եկեղեցի ունենալը ցանկալի է, սակայն ծուխ ունենալը՝ ավելի կարևոր, նա ամբողջ հոգով հավատում է, որ «եթե ինքն իր ցանցը նետի, ինչպես արել էր Պետրոս առաքյալը, Տերն այն կլցնի» (էջ 70):

Հայր Խուանի գործունեության այս կողմը Գրոսքլոուսը պատկերում է ասացողին վայել անբռնազբոս անմիջականությամբ: Վեպում նկարագրվում են բազմաթիվ տեսարաններ մահմեդական աշխարհում քրիստոնեություն քարոզելու դժվարությունների, կարմելիտ միսիոներների ամենօրյա անձնվիրության ու նվիրվածության մասին, որոնք, հավաստի լինելով հանդերձ (գրեթե բոլոր դեպքերը հակիրճ նկարագրված են նաև կարմելիտների նամակներում և հաշվետվություններում), հափշտակում են իրենց բարձր գեղարվեստականությանը:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
2 (ՃԲ) ԳՊՐԻԿ, ԹԻՎ 4 (48) ԽՈՒՄԵՆԻԵՐ-ՂԵԿՄԵՆԻԵՐ, 2014
ՎԷՆ ԽԱՄԱԿԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՂԵՆ

Թեպետ պարսիկները մեծ շտապողականություն չեն ցուցաբերում եղբայր Խուանի քարոզած փրկության ճանապարհին հետևելու գործում, Շահ-Աբասը քրիստոնեության նկատմամբ հաճախ այնպիսի անկեղծ թվացող հիացմունք և հետաքրքրություն է ցուցաբերում, որ շուտով Խուանին հույսեր է ներշնչում, թե միգուցե ինքն այդ երկրում է գտնվում նախախնամության պահանջով, գուցե հենց ինքը պիտի լինի այն գործիքը, որի միջոցով Աստված ցանկանում է կրոնափոխ անել Արևելքի մեծ տիրակալին՝ այդպիսով փոխելով աշխարհի ընթացքը: Շահի հետ յուրաքանչյուր հանդիպումից հետո այդ մտքերն էլ ավելի են հալածում և միաժամանակ ոգեշնչում միամիտ Խուանին, ով սկսում է թարգմանել Հովհանի կտակարանը, որպեսզի ավելի հեշտ լինի շահին և պարսիկներին ներկայացնել փրկարար հավատի էությունը:

Շահ-Աբասի՝ քրիստոնեության նկատմամբ տածած հետաքրքրությունը պատմական իրողություն է, որի մասին բազմաթիվ հիշատակություններ կան կարմելիտների հաշվետվություններում¹⁵: Դեռևս մինչև կարմելիտների առաքելությունը տարբեր ճանապարհորդներ (Ֆրանսիս Կոստա և այլք) Հռոմի պապին այնպիսի չափազանցված հեքիաթներ էին պատմել Աբասի՝ կաթոլիկություն ընդունելու հնարավորության մասին, որ պապը շահին ուղարկած նամակների մեծ մասն ավարտում էր՝ օրհնելով նրա աստվածահաճո մտադրությունները: 1601-ով թվագրված նամակներից մեկը գրեթե ամբողջովին նվիրված է այդ խնդրին: Այդ նամակից թարգմանված հետևյալ հատվածները ցույց են տալիս, թե որքան հեռու էր տարածվել Շահ-Աբասին և, հետևաբար, բովանդակ Պարսկաստանը կրոնափոխ անելու հնարավորության հույսը. «Անտարակույս, Մեր հոժար կամքով հոգևորականներ կուղարկենք, որպեսզի Ձեզ և Ձեր ժողովրդին բացատրեն ավետարանական ճշմարտությունը, և եթե Դուք հնազանդ սրտով ունկնդիր լինեք և ընդունեք այն և որոշեք վերջապես ենթարկվել կատարյալ Աստծուն, ով զարմանահրաշ կերպով կանչում է Ձեզ, և զինվորագրվել Հիսուս Քրիստոսին, ով մեր հավիտենական լույսի աղբյուրն է ու փրկության ուղին, միմիայն այդ դեպքում Դուք Ինքներդ և՛ ճշմարիտ երջանկություն ձեռք կբերեք, և՛ ճշմարիտ երջանկություն կպարգևեք Ձեր թագավորությանը»: Կամ՝ «Երբ լսում ենք, թե որքան լավ եք տրամադրված Քրիստոսի անվան և քրիստոնյաների նկատմամբ, Մենք, թվում է, տեսնում ենք, որ Ձեր սիրտը շարժվում է Աստծո կամքով: Ուրեմն թող Աստված, մեր ողորմած Հայրն Ինքն ավարտի հասցնի այն գործը, որն սկսել է Ձեր մեջ, որպեսզի Դուք մեզ և քրիստոնյա իշխանների հետ միավորվեք: Ձեզ հետ հավատով կապված լինելով՝ նրանք Ձեր բոլոր շահերն իրենց սեփականը կհամարեն, և այդ կերպ ավելի բուռն կլինի նրանց ցատումն ընդհանուր թշնամու դեմ»¹⁶:

Սակայն, ինչպես նշեցինք, կարմելիտները Պարսկաստան էին ժամանել այն ժամանակ, երբ Շահ-Աբասին առանց քրիստոնյա իշխանների միասնական գործողությունների հաջողվել էր թուրքերից հետ վերցնել

15 Տե՛ս «A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVIIth and XVIIIth Centuries», London, 1939, pp. 84-89, 93, 161, 242, 249, 254.

16 Նույն տեղում, էջ 86:

իր նախորդների կորցրած տարածքները, և, բնականաբար, շահի վերաբերմունքը քրիստոնեության նկատմամբ սկսել էր փոխվել: Գրոսբլոուսը, հանգամանորեն օգտագործելով իր հերոսների նախատիպերի թողած հաշվետվությունը, նկարագրում է հենց այն ժամանակահատվածը, երբ կարմելիտներն աստիճանաբար հասկանում էին, որ Շահ-Աբասի հետաքրքրությունը քրիստոնեության նկատմամբ կեղծ է, որ նման հույսեր ներշնչելով և եկեղեցիներ բացելու խոստումներ տալով՝ շահը հիմնականում ցանկանում է արևմտյան տերություններին օգտագործել թուրքերի դեմ և պարսկական մետաքսի համար շուկա ստեղծել:

Դեռևս 1608-ին՝ Պարսկաստան ժամանելուց ընդամենը մեկ տարի անց, Եղբայր Թադեուսը պապին ուղարկած իր նամակներից մեկում գրում է. «Ինչ վերաբերում է այս թագավորին, նա իր սրտում մահմեդական է, և այն ամենը, ինչ արել է անցյալում, կեղծ է եղել: Հիմա, երբ թուրքերի դեմ այդքան պատերազմներ է տարել, նա անտարբեր է քրիստոնյա բոլոր իշխանների նկատմամբ և հասարակության մեջ ծաղրում է նրանց, որովհետև նրանք պատերազմ չեն սկսում թուրքի դեմ, իսկ եթե սկսում էլ են, ոչ մի արդյունքի չեն հասնում»¹⁷:

Վիպասանը գեղարվեստական մեծ վարպետությամբ է պատկերել ընդհանրապես այն բոլոր էջերը, որտեղ նկարագրվում է շահը, և հատկապես այն պատկերները, որտեղ շահը ներկայանում է որպես քրիստոնեական դավանանքով հետաքրքրվող և քրիստոնյաների ձակատագրով մտահոգվող հովանավոր հայր: Շահ-Աբասի ու Եղբայր Խուանի՝ կրոնի մասին դրամատիկ գրույցները հեղինակի համար դառնում են միջոց՝ պատկերելու քրիստոնեական և մահմեդական քաղաքակրթությունների տարբերությունները: Գրոսբլոուսը քրիստոնեության հիմնական առավելությունը համարում է նրա ընձեռած փրկության հնարավորությունը, որը վիպասանն առաջարկում է որպես համընդհանուր միջոց հանգուցային բոլոր խնդիրները լուծելու գործում: Իսկ այդ խնդիրները բացահայտվում են բազմաթիվ տեսարաններում: Իրականում Հայր Խուանի՝ պարսկական իրականության հետ բոլոր շփումների ընթացքում հանդիպած մշակութային տարբերությունները, որոնք պայմանավորված էին կրոնական գաղափարախոսությամբ, մեկնաբանվում են հեղինակի աշխարհայացքի տեսանկյունից, հանգամանք, որը թերևս թուլացնում է վեպի զուտ գեղարվեստական արժեքը, բայց բնավ չի տուժում ճանաչողական ու բարոյափիլիսոփայական նշանակությունը:

Եղբայր Խուանի միսիոներական առաքելությունը մահմեդական աշխարհում չի տալիս սպասված արդյունքը. Պարսկաստանում հաստատվելուց տասնհինգ տարի անց նրա ծուխը կազմում է ընդամենը ութ դավանափոխ, որոնց կրոնափոխության հանգամանքները նկարագրելիս Գրոսբլոուսը հիմնականում պահպանում է «Տարեգրության» տվյալները՝ փոխելով նրանց անունները և նահատակության որոշ մանրամասներ¹⁸:

Վեպի «Նահատակություն» վերտառությամբ գլխում գրողը պատկերում է Շահ-Աբասի դաժան հաշվեհարդարը հավատափոխ մահմեդա-

17 Նույն տեղում, էջ 164:

18 Տես նույն տեղում, էջ 259-263:

կանների նկատմամբ: Նա այս դեպքերը նկարագրելիս ևս օգտագործել է «Տարեգրության» տեղեկություններն այդ իրադարձության մասին՝ ստեղծելով գեղարվեստական տպավորիչ պատկերներ, որտեղ մահմեդականների անողոք դաժանությունը հակադրվում է հավատափոխ քրիստոնյաների՝ Հիսուսի նկատմամբ անձնագոհ սիրուն (223–249):

Իհարկե, դավանափոխ և համակրող մահմեդականների թիվն անշան է, սակայն Գրոսքլոուսի համար դա քրիստոնեական բարոյականության հաղթանակի սկիզբն է: Տնային կալանքն ու դրան հաջորդող դեպքերի նկարագրությունն արվում են այնպիսի ոգով, որ ընթերցողը Հայր Խուանի օգնությամբ զգում է, թե ինչպես է աշխատում Սուրբ Հոգին: Մարտիրոսությանը հետևած տնային կալանքը տևում է 8–9 ամիս, որից հետո Շահ-Աբասը Խուանին ունկնդրություն է նշանակում հերթական դուրբարներից մեկի ժամանակ ու հարյուրավոր մոլլաների և այլ պաշտոնյաների ներկայությամբ մեղադրում նրան իր վստահությունը չարաշահելու մեջ: Շահի կողմից անհիմն մեղադրանքների տարափին Խուանը հակիրճ ու համարձակ պատասխաններ է տալիս, որոնք ևս մեկ անգամ բնորոշում են քրիստոնեական մտածելակերպի և մահմեդականի տարբերությունները: Իսկ շահը հերթական անգամ նկարագրվում է որպես քմահաճ ու դյուրաբորբոք տիրակալ, որը, կեղծ մեղադրանքներ ներկայացնելով, աշխատում է պալատականների ներկայությամբ ինքն իրեն հասցնել կատաղության այնպիսի աստիճանի, որ կարողանա ինչ-որ կերպ վերջնական լուծում տալ Պարսկաստանում կարմելիտների և քրիստոնեության ճակատագրին: Եղբայր Խուանն իր քարոզչական գործունեությունը շարունակելու մեղադրանքին պատասխանում է՝ շահին պատասխան մեղադրանք ուղղելով այն մասին, թե «ինչպես է շահն ինքը համարձակվել կրոնափոխ անել այնքան հայերի, որոնց խոստացել էր պաշտպանել» (247): Ավելին, Խուանը համարձակորեն հայտարարում է, որ քանի դեռ ապրում է նրա թագավորությունում, շարունակելու է քրիստոնեություն քարոզել: Այս տեսարանում Շահ-Աբասի կողմից հայերին կրոնափոխ անելու հանգամանքն առաջին ու միակ անգամ է հիշատակվում վեպի էջերում, թեև կարմելիտների բազմաթիվ նամակներում այդ իրողությունը նկարագրվում է բոլոր մանրամասներով:

Խուան Թադեուսի կերպարն առանձնահատուկ նշանակություն ունի գրողի աշխարհայացքի վրա էքզիստենցիալիստական փիլիսոփայության ազդեցությունը բացահայտելու տեսանկյունից: Խուան Թադեուսի միսիոներական առաքելության նկարագրությունը մարմնավորում է կիերկեգորյան էքզիստենցիայի՝ գոյության բարձրագույն աստիճանը՝ կրոնական փուլը: Սկզբնաղբյուրից ընտրած պատմական անցքերն իմաստավորելով իր փիլիսոփայական դրոյթներով՝ Գրոսքլոուսը, հերոսի անհատականությունն ամբողջացնելու և ընթերցողի համար ավելի հրապուրիչ դարձնելու համար Եղբայր Թադեուսի կրոնական գործունեությանը զուգընթաց, պատկերում է նաև նրա մարդկային էությունը, որին խորթ չէր կնոջ նկատմամբ տաճած սերը, որը նույնպես հանգուցալուծում է ստանում Կիերկեգորի առաջարկած սկզբունքով:

Եղբայր Խուանի կերպարը հայ իրականության համար պետք է հե-

տաքրքիր լինի նաև այն պատճառով, որ «Տարեգրության» բազմաթիվ փաստաթղթերից երևում է, որ նրա և հայերի միջև բարեկամական հարաբերություններ էին ստեղծվել. «Որպես միսիոներ՝ նրա պարտքն էր, որքան հնարավոր է, թույլ չտալ, որ հայերին ուժով հավատափոխ անեին»¹⁹: Հայերն այնքան են սիրել Խուանին, որ երբ վերջինս 1628-ին վերադարձել է Հռոմ, նամակ են գրել պապին՝ աղաչելով, որ նրան հետ ուղարկի և նշանակի հայոց եկեղեցու եպիսկոպոս²⁰: Վիպասանը չի անդրադառնում կարմելիտի կյանքի այս կողմին, որովհետև նրա թիրախն այս վեպում շահի ու կարմելիտների հարաբերություններն են:

Պարսկաստանում եղբայր Խուանին հանդիպած մարդիկ խավարի մեջ հուսահատ խարխափող միայնակ հոգիներ էին, որոնց նա անձնվեր քրիստոնյայի անկեղծ ցանկությամբ փորձում էր փրկության ճանապարհ ցույց տալ: Սակայն բոլորը չէ, որ ընդունում էին նրա մեկնած ձեռքը: Շամալան և Շըրլին, առանց կասկածելու կամ երկմտելու, ընդունում են Խուանի մատնանշած ձյնարիտ ճանապարհը, քանի որ քրիստոնյա էին, և նրանց բարոյական կերտվածքն օգնում է ձիշտ որոշում կայացնելու: Փրկության քրիստոնեական ուղին ընդունում են նաև այն ութ կրոնափոխները, որոնք համարձակվում են Շահ-Աբասի դաժան գահակալության տարիներին դավանել այն կրոնը, որին ձգտում է իրենց հոգին, ու թեև նրանք ի վերջո կյանքով են վճարում մահմեդականությունն ուրանալու համար, արժանանում են հանուն Քրիստոսի նահատակվելու գերագույն պատվին: Ի տարբերություն այս քրիստոնյաների՝ մահմեդականները (Շահ-Աբասը, նրա որդի Խուդաբանդե Միրզան, Ալլահ Վերդի խանը) ի վիճակի չէին ըմբռնելու քրիստոնեական բարոյականության առաջարկած մխիթարությունն ու հոգու խաղաղությունը, և, հետևաբար, Խուանի առաջարկած ուղին տարօրինակ, նույնիսկ միամիտ ու ծիծաղելի էր թվում: Բայց նա, չհուսահատվելով իր ապարդյուն ջանքերից, անձնվիրաբար շարունակում էր օգտագործել հնարավոր բոլոր առիթները՝ քրիստոնեական բարություն և հանդուրժողություն սովորեցնելու համար: Հայր Խուանի ջանքերը, թեպետ շահը, նրա պալատականներից շատերը և բազմաթիվ հասարակ մարդիկ երբեմն գնահատում են ըստ արժանվույն, հրաշագործ ազդեցություն չեն թողնում թշնամաբար տրամադրված իսլամական աշխարհում: Ավելի հաճախ նրա խոսքերը հնչում են ընդամենը որպես «ձայն բարբառոյ յանապատի»: Սակայն Գրոսբլոունն իր պատումը տանում է այն ուղղությամբ, որ ընթերցողն ըմբռնի ապառաժների մեջ սերմ ցանելու դժվարությունը, իսկ հաճախ էլ՝ անհնարիությունը, բայց նաև անհրաժեշտությունը:

Վերջաբանի փոխարեն

Իր բոլոր ութ գեղարվեստական ստեղծագործություններում է. Գրոսբլոունը ցանկացել է ժամանակակից մարդուն և քաղաքակիրթ աշխարհը

19 "A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVIIth and XVIIIth Centuries", London, 1939, p. 929.

20 Տես նույն տեղում, էջ 320:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
Զ (ԺԲ) ԳՊԻԿ, ԹԻՎ 4 (48) ԽՈԼՊՆԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2014
ՎԷՆ ԽԱՄԱԿԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՈՒՆ

հին վարակել փրկության մասին իր համոզմունքներով և այդ նպատակով ջանադրաբար ուսումնասիրել է պատմական այն ժամանակահատվածները, երբ մարդկության առանձին հատվածների կյանքում ստեղծվել էին այնպիսի սահմանային իրավիճակներ, երբ նրանք կանգնել էին կործանման եզրին: Գրողի կատարած պատմական ուսումնասիրությունների արգասիք չորս վեպերում՝ «Արարատ», «Կարմելիտը», «Օլիմպիա» և «Քայովան», նկարագրելով տարբեր դարաշրջաններում ազգերի կամ անհատի կյանքում տեղի ունեցած ճգնաժամային իրադարձությունները, որոնք ճակատագրական ելք են ունենում կամ կարող էին ունենալ, հեղինակն առաջարկում է անելանելի վիճակից փրկության իր տեսլականը: Գրոսքլոուսը խորապես հավատում էր, որ քրիստոնյայի ամենամեծ առաքինությունն Աստուծու կամքին անվերապահորեն ենթարկվելն է: Միայն այդ դեպքում մարդը կարող է արժանանալ քրիստոնեական կրոնի ամենամեծ պարգևին՝ փրկությանը: Քրիստոնեական փրկության գաղափարի ընկալումը, ընդունումն ու այդ գաղափարով ուղղորդվելը հենց այն պայմաններն են, որոնք ոչ միայն ապահովում են մարդու գոյությունն իր իսկ ստեղծած երկրային դժոխքում, այլև կերտում նրա ինքնությունը:

«Կարմելիտը» վեպում Շահ-Աբասն այդպես էլ չի կարողանում ըմբռնել մեղքի և փրկության քրիստոնեական ուսմունքը և գնում է դեպի բարոյական ու ֆիզիկական կործանում, իսկ նահատակված քրիստոնյաները բարոյական հաղթանակ են տանում չարի նկատմամբ:

Սվետլանա Ռ. Թումանյան– Հեղինակ է անգլերենի ուսուցման մի շարք դասագրքերի. Cultures Worldwide – 2006, Insight into the Science of Physics – 2006, Read the Bible and Improve Your English – 2007, Practise the Language of Newspaper – 2011: 2005-ին թարգմանել է Է. Գրոսքլոուսի «Արարատ» վեպը:

Summary

SHAH ABBAS AND ARMENIANS OF NOR JUGHA in Elgin Groseclose’s novel “The Carmelite”

Svetlana R. Tumanyan

The Carmelite by Elgin Groseclose is a historical novel that depicts the Persian mission of discaled carmelites in the reign of Abbas the first, dispatched by Pope Clement VIII. Trying to phylosophically evaluate the political, diplomatic and religious aspects of the mission, the American novelist also presents the complicated relations of the Shah with the Armenian colony, forcefully established in Julfa. In part 4, entitled Affairs of Empire, the Armenian religious holiday, the Khatchaturan, commemorating both the Lord’s baptism and His manifestation to the Jews, is portrayed in all detail, based on historical facts. The letters of the Carmelites edited, translated and published by Herbert Chick

in *A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVIIth and XVIIIth Centuries* (1939) provided authentic material for the historical events described in the novel. Fray Juan Thaddeus, the protagonist of the novel, was a historical person as all the other characters in the novel, who was so well revered by the Armenian community of Julfa, that when he left Persia, Armenians sent a letter to the Pope beseeching Him to send the Carmelite back as the Bishop of an Armenian Church in Julfa.

Резюме

ШАХ АББАС И АРМЯНЕ НОВОЙ ДЖУГИ
В романе Элджина Гросклоуза “Кармелит”

Светлана Р. Туманян

“Кармелит” Элджина Гросклоуза – историческая повесть, описывающая христианскую миссию босоногих кармелитов в Персии во время правления Аббаса Первого. Оценивая политические, дипломатические и религиозные аспекты миссии с философской точки зрения, американский автор представляет сложные отношения персидского шаха с армянской колонией, насильно переселенной в Новую Джульфу. В четвертой части повести “Дела империи” подробно описывается хачатуран – армянский церковный праздник Крещения Господня и Богоявления иудеям, основанный на достоверных исторических фактах. Письма кармелитов, отредактированные, переведенные и опубликованные Гербертом Чиком в 1939 г. в “Хронике кармелитов и Папской миссии в Персии в XVII–XVIII вв”, обеспечили достоверность исторических событий, описанных в повести. Главный герой романа, отец Хуан Тадеус, реальный исторический персонаж, был так уважаем армянами, что, когда он покидал Персию, армяне обратились к Папе Римскому с просьбой отправить его обратно в качестве епископа армянской церкви.

ՊՐԱՎԱԾԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԳՐԱԿԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ, 2014
«Կարմելիտ» Էլդջինա Գրոսկլոուզի պատմական-գեոգրաֆիկ վեպի մասին
Ջ (ՃԲ) ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014

ՎԷՆ ՀԱՄԱԿԱՆԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԱ